# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՎԱՐԴԱՁՈՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

1417 ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Վարդաձոր   հեռ. /+374/091550059

,, 07 ,, Մարտի 2013թ.   N: 043

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Կից ներկայացվում է Վարդաձորի գյուղապետի 2013թ.-ի մարտի 4-ի թիվ 8 որոշումը:

Հարգանքներով.

Վարդաձորի գյուղապետ՝ Ռ.Սիրականյան

13 03 2013թ

Մուտք թիվ 1405-13

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Որոշում թիվ 8

04-ը Մարտի 2013թ. գ. Վարդաձոր

Սերյոժա Աբրահամյանի դիմումի մասին

Հարցի քննարկման հիմք է հանդիսացել Սերյոժա Աբրահամյանի /ծնվ. 01.01.1960թ./ դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ 05-084-063-088 ծածկագրով, 0.183 հա հողամասը պատկանում է Սերյոժա Աբրահամյանի, սակայն քարտեզագրման աշխատանքների ժամանակ նշված հողամասը գրանցվել է Միրզաջան Աբրահամյանի անունով: Քանի որ Սերյոժա Աբրահամյանի կողմից փաստացի զբաղեցրած հողամասի չափը չի հակասում ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին և չի խախտում այլ անձանց իրավունքները և համաձայն ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին.

**Որոշում եմ՝**

1. Ճանաչել Սերյոժա Աբրահամյանի Սեփականության իրավունքը 05-084-063-088 ծածկագրով, 0.183 հա հողամասի նկատմամբ,
2. Հողամասի մակերեսները որոշվում են Վարդաձորի գյուղապետարանի աշխատակազմի ճարտարապետի կողմից տրված գլխավոր հատակագծով:
3. Հողամասին տրամադրվել է գ. Վարդաձոր, Ալաշկերտի փողոց թիվ 79 հասցեն,
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քարտուղար Վ. Շահբազյանի վրա:

Վարդաձորի գյուղապետ՝ Ռ. Սիրականյան